

ՕԴՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

Փառած Խաղողէ ուստի՝ Անել :

ՈՒԱՌԶՆԵՐՈՒՆ վրայ որչափ որ
փատած համեր կամ փրցու, ու խալ-
իբնով մը կրակի վրայ դիր, վեց եօթը
վայրկեանի շափի եփէ . ետքը մաղի
մէջ լեցուը ու ձեռքով կամ փայտէ
դդալով ձզմէ որ մաղին ծակերէն անց-
նի . միայն թէ երեւմն երեւմն մա-
ղին ծակերը փայտի շիւզով մը բաց որ
ձզմած խաղողիդ հիւթը դիւրաւ
անցնի, և միայն խաղողին կուտերն ու
կաշին բոլորովին փատած ըըլլալով՝
չկարենան անցնիլ : Ան մաղէ անցած
հիւթը նորէն մաղմաղ կրակի վրայ
դիր ու եփէ ինչուան որ աղէկ մը
թանձրանայ, ու եփելու ատեն երգեմն
երգեմն դդալով մը խառնէ :

Աս բանս դիտելու է որ խաղողը չոր-
ցած չըլլայ, հապա միայն փատած
կամ թոռմած . և ձերմակ ու սե խա-
ղողը կրնան մէկտեղ խառնուիլ : Ու-
րիշ ուսւփերուն պէս պառւզներ պէտք
չէ խառնել ասոր մէջ . բայց միայն
կրնայ դրուիլ գինձ² ու լեմնի կամ
նարնջի բարակ կեղեւ՝ համալու հա-
մար : Աս կերպով շնուած ուսւփը
թանձր կ'ըլլայ, բայց շատ համով ու
անուշ, անանկ որ ուտառզը կարծէ թէ
մէջը շաքար կամ մեղք դրեր են :

ԱԺՌՈՒԽՈՎ ՀՅՈՒ ՃԵՐԱՋԾԱՆԵԼ :

Ա ՍԻՇԻ թելը կամ գերձանը ու-
վորաբար մօխիրավ կը ձերմը կցը ընեն .
բայց փորձեր են որ եթէ աղէկ մը ե-
փես վուշը ածուխի փոշիով, ու ետքը
լուանաս ու չորցընես, շատ աւելի ա-
ղէկ կը ձերմը ինայ : Հազար օխայ
թել ձերմը ընելու համար քսանը-
հինգ տրամ ածուխի փոշի բաւական
է :

1 Փէտէւ:

2 Քիշիւ:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԻշակէր Խաղողանելը :

ԳԻՇԱԿԱԿԵՐ կ'ըսուին ան թռչուն-
ները, որ ուրիշ կենդանիներ կ'որսան
ու անոնց մսովը կ'ապրին . իրենց կը-
տուցովը կը պատռեն զանոնք, երբեմն
ալ ճանկով բանած՝ կը տանին : Ոմանք
միայն կենդանեաց մարմինները ուտե-
լով կ'ապրին, ոմանք ալ իրենց ուզած
կենդանիները բռնելով՝ նախ արիւն-
նին կը ծծեն, ետքը անոնց մարմինը
կ'ուտեն : Կ ատը կան որ խիստ բարձր
կը թռչնին, բայց աչուշնուն սրութիւնը
գետնին երեսը քալող կենդանւոյն
ինչուան պղտի շարժմունքներն ալ կը
տեսնեն . հոտառութիւննին ալ շատ
սուր է : Խակ գիշերայինները այն-
պիսի աչք մը սւնին որ քիչ մը լցոն
ալ բաւական է իրենց համար որսեր-
նին տեսնելու, և ընդհանրապէս շատ
լցոնը աչուշնուն նեղութիւն կուտայ :
Գիշակերներուն շատը մինակութիւն
կը սիրեն, ու ինչուան իրենց ընկերնե-
րէն ալ հետու կը կենան : Խիստ քիչը
կան որ իրենց բոյնը ծառերու վրայ
կը դնեն, հապա ընդհանրապէս չմօ-
տենալու ժայռերու ու բարձր աշտա-
րակներու վրայ : Ուկ անդամուն ին-
չուան չորս հաւկիթ կ'ածեն : Զագե-
րը 'ի սկզբան աղուամաղ մը կ'ունե-
նան վրանին, և մօրերնուն բերած
կերակուրը իրենք իրենցմէ կ'ուտեն :
Լագերը արտներէն աւելի խոշոր են :
Զայներնին ընդհանրապէս անխորժ
ու սուր է : Խրաւ է որ աս գիշակեր
թռչունները շատ անդամ մեծամեծ
վնասներ կ'ընեն մարդուս, որովհետեւ
ուտելու կենդանեաց ու անասնոց
վրայ կը յարձը կին ու կը սպաննեն,
բայց ոմանք ալ շատ օգտակար են
մարդուս, ինչու որ մեռած անասնոց



(Հակեր բազե :)

Մարմինները ուտելով՝ օդը կը մաքրեն .
ապա թէ ոչ , անոնց փտութիւնն ու
գարշահոտութիւնը շատ հիւանդու-
թեանց պատճառ կընար ըլլալ : Ուր
թողունք որ մարդկային բնութեն գե-
րազանցութիւնն ու կարողութիւնը
ասոնց վրայ ալ կ'երենայ , որ այսպի-
սի ահաւոր և գիշատիչ թռչունները
ոչ միայն ողջ ողջ կը բռնէ , այլնաև ին-
չուան իր կամացը կը հնազանդեցընէ
և ուզածին պէս կը ծառայեցընէ՝ որ-
սի գործածելով զիրենք :

(Հակեր բազեն , որ կտուցին հա-
մար անդդի տեսակ՝ սրունքին բար-
ձրութեանը համար ալ կռունկի տե-

սակ կը սեպսւի , ձիշդ քննութիւննե-
րով իմացուեցաւ որ գիշատիչ թռո-
չուններու տեսակ է : Դասւիս Շա-
րեյուսոյ ըսուած երկրին մօտերը կը
բնակի , ու անդադար օձերու հետ կը
կռուըտի : Ա և Այլեան՝ անունով
հոչակաւոր ձանապարհորդը , որ Ափ-
րիկէի առաջին բնական պատմութիւ-
նը գրովն է , շատ անդամաչքով տես-
նելով աս բազէին օձի հետ կռուիլը՝
այսպէս կը ստորագրէ . “ Շազէն օձը
տեսնելուն պէս՝ կը մօտենայ անոր ,
մէկ թեր կը բանայ ու վահանի պէս
անով մարմինն ու սրունքները կը
պաշտպանէ . մէկալ թեռովը կը պատ-

¹ Լ. Falco serpentarius. Իս. Segretario. Գ. Հ.
Le Messager կամ le Secrétaire reptilivore.

Գ. Վ. Le Vaillant.

բաստուի թշնամնոյն գլուխը ծեծեւու : (Հը կը սկսի շըչել, կուրծքը դէպ'ի վեր կը տնկէ, ու բազէին դէմ կը յարձըկի որ խածնէ զինքն ու թունաւորէ . բայց օձին բոլոր աս պատրաստութիւնները սովորաբար փուժ կ'ելլէն . վասն զի բազէն ամէն կերպով զինքը պաշտպաննելով, ասդիս անդին դառնալով ու ցատքըտելով՝ միշտ բացած թենին փետուրները դէպ'ի օձին բերանը դարձուցած կը կռուի . օձը կը խածնէ փետուրներն ու թոյնը անսնց վրայ կը թափէ, բայց անօգուտ, բազէն անդադար փետուրներով կը զարնէ կը վիրաւորէ իր թըշնամին, ինչուան որ անիկայ կիսամեռ կ'ինայ . բազէն կտուցով կը բռնէ դլիսն ու գանկը կը ջախջախէ կամ կը ծակէ : Ուէ որ մեծ չըլլայ օձը, ամբողջ կը կըլէ . իսկ թէ որ մեծերէն է, կտոր կտոր կ'ընէ ու անանկ կ'ուտէ . լ ը Այլեան աս բազէններէն մէկը սպաննելով՝ ստամոքին մէջ գտերէ 21 հատ մանր կրիայ, 11 մօղէս ու իրեք օձ՝ միջակ մեծութեամբ . աս սողուններուն դանկերը բոլոր մէկ դիէն մէկալը ծակած են եղեր . իսկ խածիքին՝ մէջ գտերէ սագի հաւկը թիւ մեծութեամբ դնտակ մը որ օձերու ու մողէսներու սոկորներ են եղեր . անշուշտ աս նիւթերը բազէն մարսել չկրնալով՝ ստամոքսէն դուրս կը ձգէ : Բայցնը բարձր թուփերու կամցած ծառերու վրայ կը դնէ՝ խիտ տերեներու մէջ, ու ներսի դին խոտերով ու փետուրներով կը պատէ : Վայն մէկ թուխօին երկու իրեք հաւկիթ կ'ածէ՝ հասարակ սագի հաւկը թիւ մեծութեամբ, բայց աւելի երկայնաձեւ շերմակ ու տեղ տեղ կարմիր բծերով : Զագերը երկար ատեն ակար կը մնան . առջի բերան ծնկուրներուն վրայ կը քալեն ինչուան չորս հինկ ամիս . ուստի ինչուան այսափ

ատեն մայրերնին կը կերակրէ զիրենք : Ինազէն սովորաբար լուռ կը կենայ, ու քիչ անգամ ծուր ու անախորժ ձայն մը կը հանէ՝ արծիւի ձայնին նման . երբեմն ալ ասդիս անդին վազելու ատեն, կամ երբոր մէկը իրեն մօտենայ՝ գորտի պէս կը կռուայ : Պզտիկն որ բոնես, կրնայ ինչուան այնչափ ընտանենալ որ հաւերու հետ ալ խաղաղութեամբ կը կենայ . երբեմն ալ թէ որ երկու հաւ սկսին կռուիլ մէջերնին կը մանէ, կը բաժնէ իրարմէ ու կը հանգարտեցընէ . բայց թէ որ կերակուրը մուցուի, նախ կը սկսի վառեակները ողջ ողջ ուտել . թէ որ անօնցմով չկշտանայ, կը սկսի անսնց մայրերն ալ ուտել : Վայ բազէին բարձրութիւնը՝ գլուխը շիփակ դէպ'ի վեր բռնած ատենը իրեք ոտք ու երկու իրեք բթացափ է . իսկ բոլը մարմնոյն երկայնութիւնը քիչ մը աւելի երկայն է . ասոր զրեթէ կէմը թեւերուն երկայնութիւնն է . սրունքը մէկ ոտքէն աւելի բարձր է, և մարմնը հասարակ հնդկահաւի մը մարմնոյն չափ է :

ՀԱՆԵԼՈՒԿ

Գուշբոզ, առոփ ձեռքդ եմ կընկած, Հատոնք չանան՝ թողուն անբաց, Ես ու անունս եմք նոյն մարմնն . Քան զայս գըժար ինչ կոյ գիւրին :

ՅՈՒԼԱՍԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԽՂԱՇՄԱՆԻ :